

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻ ԿԱՐԳԻ
ՄԱՍՆԱԳԵՏԻ /ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.2-1/ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. ՀՀ Արմավիրի մարզի Դոդսի համայնքապետարանի աշխատակազմի առաջի կարգի մասնագետ /ծածկ. 3.2-1/:

Առաջի կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը: Ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում է համապատասխան փաստաթղթերը: Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ հետևում է աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների ընթացքին: Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

– միջնակարգ կրթություն

– ունի ՀՀ Սահմանադրության , «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն , ինչպես նաև տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

– համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանան 2019 թվականի հունիսի 10-ին ժամը 14:00-ին Դոդսի համայնքապետարանում, որը գտնվում է մշակույթի տան շենքում / հասցե՝ Գ.Դոդս, Բաղրամյան փ 1-ին նրբանցք 6/:

Դիմող ՀՀ քաղաքացիները Դոդսի համայնքապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

– դիմում մրցույթային հանձնաժողովի անունով / ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/

– տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ միասին,

– հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801 –Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

– հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

– արական սեռի անձիք զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենները,

– մեկ լուսանկար 3×4 չափսի,

– անձնագրի պատճեն:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Դոդսի համայնքապետարան / հեռ.՝ 094-33-99-31/, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն / հասցե՝ քաղ. Արմավիր , Աբովյան 71, հեռ.՝ 0237-2-07-70, - 2-76-49/:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2019 թվականի հունիսի 26 ներառյալ:

Գ.Դոդս
2019 թ հունիսի 5